



34. ՓԻՐՄՈՒՐԱԴԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մե երգերում կար մե թաքավոր, անունը՝ Գյուլխան: Գյուլխան թաքավորը քառասուն տարի թաքավորություն արավ, քառասուն կնիկ առավ, քառասուն տղա ունեցավ, քառասուն կոիվ արավ, քառասուն հախտանակ տարավ, քառասուն երգիր գրավեց, միացրեց հիրա երգրին, քառասուն քաղաք գրավեց, քառասուն հազար մարդ կոտորեց և վերջ, տեսավ՝ ծերացեր ա ու շատ արուն ա թափե, որոշեց քառասուն հախավոր շինա, որ էթող-էկողը ջուր խմա, շինողին ու շինողի հորը օղորմի տա, բալքի կատարած մեղքերը թեթևանան:

Հիմի պտի ասեք, որ Աբաչու Կարոն սուլթ ա ասում: Սուլթ չըկա, բոլորը ճիշտ ա, էս թաքավորը քառասունն էր սիրում: Հիրա հոր քառասունքն էլ հառաչինը էս մարթը կատարեց: Մինչև Գյուլխան թաքավորը քառասունք կատարելու սովորություն չըկար, էտ օրվանից էտ էլ սովորություն դարցավ:

Գյուլխան թաքավորի քառասուն տղերքը քառասուն մորից ին, մինակ խերն էր բոլորին հարազատ, հըմա մերերը ամեն օր հիրար մազ ին փիտում, մեկը մեկին դեղում էր, որ թաքավորը սերը քցի հիրանց վրեն:

Մե օր էլ էս թաքավորի տղերքը էկան խոր մոտը, գլուխ տվին, չարքով սաղաթի նման կայնան:

— Հը, ի՞նչ կա, տղե՛րք, ասե՛ք, մի՛ ամանչեք: Հա բա Փիրմուրադն հուր ա, պստի ախպորն հընչի՞ չեք բերե, պստիկ ա, լայեղ չեք անում, էնի ձեզնից քաջ ա:

— Հայրի՛կ, Փիրմուրադը տան չէր, մեկ էլ, որ դուզ ես ասում, էրեխա յա, էստեղ ի՞նչ գործ ունի:

— Լա՛վ, ասեք, տենամ, ի՞նչ եք ասում:

— Մեր հա՛յր թաքավոր, իրավունք տուր ամուսնանանք, ժամանակն ա:

Թաքավորը մե բուպե մտածեց ու ասավ. — Լավ եք ասում, տղե՛րք ջան, բոլորի ճամփեն էտ ա, որ տուն-տեղ դառնան, օջաղ

կազմեն, հըմա ձեզ մե պայման եմ դնում: Էտ պայմանն էն ա, որ էթաք աշխարքը ման գաք, ղոչաղութուն անեք, քառասուն քուր քթնեք, էտ քուրերի խետ ամուսնանաք: Թե խոսկ տալում եք, ասածս կատարեք, գացե՛ք, չեք կատարի՝ նստե՛ք տունը, ես մարթ հղրկեմ թաքավորների մոտ, տենան՝ որտեղ կա քառասուն քուր, նշանեն, էթանք պատվով, հարգանքով խնամի դառնանք, թաքավորին լայեղ խարսներ բերենք, թե չէ ամեն քուչից մեկը բերածը բանի պետք չի: Ասում են, որ Հաջուջ-մաջուջների թաքավոր Ահմադ խանը քառասուն ախճիկ ուներ, քառասունն էլ կորել են: Կարող ա, դեերն են տարել, գացեք դեերի խետ կովե՛ք, քառասունին էլ ազատե՛ք, բերե՛ք: Որ Փիրմուրադին չեք տանում, հնվելի լավ, պստիկ ա, թո մնա տունը: Փոքր քուրը կըբերեք Փիրմուրադին: Տղերքը խորից շնորակալութուն հայդնին, վերցին մե խուրջին ոսկի, կապին թրերը, խեձան ձիանքը, հընգան ճամփա, թե հուր են էթում, ըսկի հիրանք էլ չեն հիմանում: Մեծ ախպերը հիրա ձիան վրա դրել էր խուրջինով ոսկի, մնացած 38-ը խուրջինների մեջ դրեր ին տկերով արաղ ու գինի, ուրիշ ուտելիք, կասես խառնիս ին էթում, ոչ թե դեերի խետ կովելու:

Հիմի խաբարը տանք Փիրմուրադից: Փիրմուրադը 14-15 տարեկան էր, հիրա դայդաշ տղերքի խետ գացեր էր որսի: Հիրկուն արևմտոցին էկավ տուն, տեսավ ոնչ մե ախպերը չըկա: Գնաց մորը խառցուց, թե հո՛ւր են ախպրտանքը:

Մերը նեղացավ, ասավ.—Ախպրտանքտ մեր ունեն, գնա խառցոր՛ւ, ես հո ընդոնց դարավուլը չեմ, էնենց էթան, որ չըգան:

—Ա՛յ մեր, ախպերնեքիս բան մի՛ ասա, ես գիղամ իմ ախպերները, ղուք կնանիքով ինչ ուզում եք հիրար ասեք, օտար եք, մենք մե խոր տղա ենք:

—Էտ մե խոր տղերքը քեզի մարթի տեղ չեն դնում, խերտ մեռավ, մեկը կըդառնա թաքավոր, քեզի ըսկի չեն վստահի, որ հիւրանց ձիանքն է պախես:

—Լա՛վ, լա՛վ, մայրիկ մի՛ նեղացի:

Փիրմուրադը պալատի մե օթաղից մտնում էր մեկէլը, վերչը հիմացավ, որ գացեր են արևմուտք՝ Հաջուջ-մաջուջների թաքավորի 40 ախճիկներին քթնելու, որ պսակվեն: Էստեղից գնաց թաքավորի մոտ, որ հինքն էլ էթալու իրավունք առնի:

Մտավ թաքավորի սենյակն ու ասավ.—Թաքավոր՝ հայրիկ, իմ ախպերներին հո՛ւր ես հղրկել:

—Փիրմուրա՛դ ջան, ես չեմ հղրկե, հիրանք գացին, ես չի ուզում, որ էթան, հըմա գացին:

—Ես էլ կէթամ, հայրի՛կ, տանը մինակ չեմ մնա, ախպերներիս մե բան կրպատահի էլ իմ սաղ մնալը ինչի՞ պետք ա. կըխմեն, կըհարփեն, մեկը կըգա քնուկ տեղ բոլորին կըմորթա: Ես ըստոնցը լավ եմ հիմանում:

Թաքավորը ուզեց Փիրմուրադին ետ պախա, բայց հնար չեւալ՝ կէթամ, որ կէթամ:

Տեսաւ, որ չի կանա պախա, իսկ թաքավորը Փիրմուրադին՝ որպես վերջի թիքա, ամենից շատ էր սիրում, ասաւ. — Փիրմուրա՛դ, քեզի կըտամ իմ ձինն ու թուրը: Իմ ձինը նրանց մե օրվա ճամփեն կանցնի մե սՀաթ, հըմա իմ թուրը հուրիչ հունար ունի: Եթե վտանգն եռու ա, թուրը ճնգում ա, եթե վտանգը մոտնում ա, թուրը մե թիգ դուս ա գալում, եթե վտանգը շատ մոտ ա, կեսն ա դուս գալում: Որ կըքնես, թուրը դիր գլխիտ տակը, անգաճտ դիր վրեն, հըմա ճնգաց, էլ մի՛ սպասա, չո՛ւտ հելի, ձինտ խեձի՛, պատրա՛ստ կայնի, մի՛ սպասի, որ դուս թռնի: Զգո՛ւչ մաց, խարաբա գեղ, խարաբա տուն չըմտնեք, գիշերը էտ տեսակ տեղերում չըքնեք: Ուրաբեն, որ խերով հըլներ, խարաբա չէր հըլնի: Ախպերներտ գնացին արևմտյան ճամփով, դե գնա՛:

Փիրմուրադը ձիան գլոխը բաց թողեց. «Դե, ձի՛ ջան, քեզի տենամ, մե սՀաթ ետո խասցնես ախպերներիս»: Զինը էնենց էր էթում, որ թոզ-դումանը բանցրնում էր, տենողները զարմանում ին: Հո չէր էթում, թռնում էր, թռած տեղը Փիրմուրադը դշերին բռնում էր, ետո բաց թողում:

Մե սՀաթ ետո Փիրմուրադը խասաւ տեղ: Տեսաւ՝ ախպերները ձիանքը բաց են թողե մե չայիր-չիման տեղ, հիրանք էլ լցվել են մե խարաբա, խմել ու արխային քնե: Իչքան բրթեց, կճտեց, թափկով տվեց, անգաճներից քաչեց, ոնչ մեկի վրեն խաբար չըկա, ոնց որ օխտը տարվա մեռել: Տեսաւ՝ հնար չըկա, չեն զարթնում, գնաց մե վերստ եռու, հիրա ձինը հորուկեց, գյամը բերնից խանեց, թուրը դրեց գլխի տակը, պարկաւ, հըմա քունը չի տանում:

Գիշերվա մե վախտին թուրը ճնգաց: Հելավ ձինը գյամեց, դուլանները պնդցուց ու թռավ քամակը, թոզը խանեց, անգաճը ձենի ա: Մեկ էլ տեսաւ մե դե լախտը ձեռին, գալում ա ուղիղ հիւրան յանը: Տեսաւ, որ դեը շատ ջղայնացած ա գալում, վազնում ա, որ խասնի, մեծ կտորը անգաճը թողա: Դեը լախտը ֆոցնում ա, քոֆում ու գալում: Լախտի ծերին էլ մե կլոր էրկաթ ա կապուկ, ոնց որ ջաղաչի քար: Լախտը տարավ-բերեց ու հիչցուց Փիրմուրադի վրեն: Զին Փիրմուրադին թոցրեց երգինք:

Դեկ սիրտը կասկած հընգաւ, հըմա ցույց չըտվեց, որ վախեցաւ, երգրորթ անքամ հավելի ուժեղ խփեց, էլի ձին թոցուց վիրե:

Հիմի դեր խասկցավ, որ Փիրմուրադի խետ գործ ունի: Ետ դառնա, փախնի, ամոթ ա, կարող ա, որ Փիրմուրադն հետեւից խասնի, խայտառակ ձեռով սպանա: Որոշեց կռվել՝ յա մահ, յա ազատութուն:

Ասավ. — Այ հողաճինի լակոտ, դու քանի՞ գլխի տեր ես, որ անցել ես մեր սահմանը, հիմի ես քո մեծ թիւքեն անգաճտ կըթողեմ, ես Փիրմուրադն եմ, լա՛վ հիմացիր:

Փիրմուրադը ծծողաց:

— Դե, Փիրմուրադը՝ Գյուլխան թաքավորի տղեն, ես եմ, դու իմ անունո՞ւմ ես ընձի վախեցնում:

Դեր Հիմի հաստատ հիմացավ, որ Փիրմուրադի խետ գործ ունի, էլ պրծնում չըկա: «— Զէ՛, — մտածեց դեր, — հարգավոր ա փախնել:» Թեքվավ, որ փախնի, Փիրմուրադը թրով տվեց դեի գլոխը թոցրեց: Դեն հընգավ: Ոստավ դեին տասը կտոր արավ, բերեց խարաբի մոտը, դարսեց, հելավ մե տան չափ: Դեի գլոխն էլ էնենց դրեց, որ նման էր կայնած դեի: Հառավոտը ախպերները զարթնան, աշկները ճոռին, հիրար զարթնցրին:

Փիրմուրադը ձեն չէր անում, կայներ էր: Զոչ ախպերը, որ տեսավ, վրեն բոռաց, ուզեց մե սիլլա տա:

— Տո լղպո՛ր անպետք, դու հընչի՞ր էկար, որ մեզի խանգարես, ախր քո հելածն ինչ ա, որ չես ուզում մեզի ենթարկվել: Դե չուտ ե՛տ դարց, խասի՛ տուն, մեր խորն ասա՛, որ մենք լավ, սաղ-սալա-մաթ ենք:

Փիրմուրադը հիշկաց դեի կողմը ու ասավ. — Վա՛յ, ախպրտա՛նք, կորած ենք, դեր:

Հինքը ձևացրեց, որ պախկվում ա պատի հետեւ: Ախպերները որ դեի գլոխը տեսան, դժացին ու ամեքը մե յան փախան: Փիրմուրադը բանցր ծծողաց, ծծադից թուլցավ: Ախպերները կատղան:

— Ղոչա՛ղ ախպերներ, — ասավ Փիրմուրադը, — մկան ծակը քանիսո՞վ եք առնում: Դեր սպանուկ ա, սպանուկ, մի՛ վախեցեք:

Ախպերները սիրտ չեն անում պախկված տեղից դուս գալ, հիրար հերես են հիշկում: Փիրմուրադը խարաբից դուս էկավ, գնաց դեի գլոխը վերցուց, չպրտեց: Ախպերները ամոթ-զամոթ մորցան, ինչ տենան: Դեր տասը կտոր արուկ, դարսուկ: Զեն չեն անում, ամանչում են:

Մեծ ախպերը մտածեց, որ հիրանցը ամոթ ա, ասավ. — Ե՛տ դարց, կորի գնա՛: Դեին քնուկ տեղ սպաներ ես, հիմի էլ ուզում ես ասել, որ դու քաջ ես, գնա՛ տուն, թե չէ անգաճներտ կըկղրեմ: Մենք էթում ենք հուրիչ երգրներ:

Փիրմուրադին թողին, հիրանք գացին: Փիրմուրադը մտածեց

եստ դառնա, բայց հիշեց, որ էն կողմը իրեք գլխանի դեկի խողն ա, ընդուց էն յանը՝ յոթ գլխանի դեկի խողը:

Ախպերները գացին: Իրեք գլխանի դեկը բոլորին կրկոտորա, ո՞նց թողա էթա: Ի՞նչ ասա խորը: «Ձէ՛, էնմ էթա, թո հիրանք էթան, ես մե ժամ էթամ, կըխասնեմ»: Նստավ, ձին հորուկեց: Տեսավ, որ ախպերները հիրանը ո՞նչ խաց են թողե, ո՞նչ ջուր: «Վա՛յ, վա՛յ, — ասավ, — ես հիրանց խըմար գլոխս դրեր եմ թրի ու լախտի տակ, իրանք մե կտոր խաց էլ չըթողին ընձի: Բան չըկա»: Հելավ դես-դեն ման էկավ, բանջար քաղեց, կերավ, գնաց ջուր քլթավ: Տարավ ձինը ջրեց, հինքը խմավ, նստավ:

Էտ հրուպերն մե խատ մարալ էկավ: Ոնձավ ձինը, թուրը քաշեց, հընգավ մարալի հետևից: Գնաց, գնաց, մեկ էլ տեսավ՝ իրեք գլխանի դեկ քիչ ա մնացե խասնի ախպերներին: Ախպերները դեկն տենալով, ձիանքի գլոխը բաց են թողե, դժալով փախնում են:

— Վա՛յ, բարի՛ մարալ, ես ուզում ի մե թիքա խորովածի խըմար քեզի սպանել: Դու էլ իմ ու իմ ախպերների խըմար անդարդ գլոխտցավ ու դարդի տակ ես դրե: Ծնորակալ եմ, մարա՛լ, ճամփեստ ծռա՛, ես գնացի դեկ յանը:

Մարալը կայնավ հանգստացավ: Դեն ու Փիրմուրաղը խասան հիրար:

— Փիրմուրա՛ղ, ես քո արնին եմ կարոտ, — ասավ դեկ, — դու իմ պստի ախպորն սպանեցիր, դե հիմի տես:

Դեն ասավ ու լախտը չպրտեց, որ Փիրմուրաղին տփա գետին: Փիրմուրաղը գնաց, էկավ, սամթ քցեց, դեկ մե գլոխը կղրեց: Ախպերները տեսան, կայնան, փախենում են՝ մոտ գան: Դեկ գոռում ա: Ձենն հընգեր ա սար-ձոր դմփդմփում ա: Դեկ ձենից ձիանքը խրտնան, ախպերներին տարան, հուր աշկներին էրևում ա:

Մե ժամ ետո դեկ մե գլոխն էլ կղրեց: Դեկ ուժը թուլացավ, հըմա էլի դիմադրում ա: Ախպերներն ամեն մեկը մե սարի գլխից, թմբի գլխից հիչկում ա: Վերչ Փիրմուրաղը երրորդ գլոխն էլ կղրեց, նստավ դեկ ջանդակին: Ախպերները տեսան, ձիանքը քչին, մոտցան:

— Տեսա՞ր, մե՛ծ ախպեր, ոնց քնած տեղը իրեք գլխանի դեկն սպանեցի: Դուք տեսաք՝ քնուկ ա, փախաք: Բա մարթ քնուկ դեկից է՞լ փախնի:

— Լա՛վ, լա՛վ, ամոթանք մի՛ տուր, հիմի տեսանք, որ քաջ ես: Անոթի ես, լվացվի՛, արի խա՛ց կեր: Տղե՛րք, տկից ջո՛ւր բերեք, լցե՛ք թո Փիրոն ձեռներն ու հերեսները լվա:

Դեկ ջանդակից եռացան, լվացվան, նստան խաց ուտելու, ձիանքն էլ թողին արածալու: Նոր ին խաց կերե պրծե, հանգարց մա-

րալն էլի էրեաց: Ախպերները վազան, որ խեճնեն ձիանքը, հընգ-
նեն մարալի հետեից: Փիրմուրադը ջղայնացավ, ախպերներին ետ
տվեց:

Էտ րուպին թուրը ճնգաց:

—Էտ մարալը ձեր ազատարար հրեշտակն ա, մարալն ընձի հի-
մաց տվեց, որ դեւ ուզում ա հարցակվի ձեր վրեն, հիմի էլ հիմաց ա
տալում, որ յոթ գլխանի դեւ լսացեր ա ախպերների ձենը, գալում
ա, պաղրաստովե՛ք:

Յոթ գլխանի դեւ անունը, որ լսացին, ախպերների թուրը
չորցավ, լիզուները բռնվավ, կայնուկ տեղը դողում են, էնենց են
դողոտում, որ կասես հիմի կըհընգնեն:

Փիրմուրադը ծծղաց, ասավ.—Մի՛ վախեցեք, ես մինակ կէթամ
յոթ գլխանի դեւի դեմ:

Ձէր քաշե կես սհաթ, դեն էրեաց: Ոնց ա գալում, ոնց ա գալում,
խետն էլ գոռում:

—Վա՛յ, Փիրմուրա՛դ, ես քո մեծ կտորն անգաճտ կըթողեմ, ես
քո ցեղին վերչ կըտամ, դու էտ ինչ արիր, իմ էրկու ախպորն սպա-
նիր, չե՛ս մարսի:

Փիրմուրադ ձինը քչեց, գնաց դեւի հառեչը: Դեւ խետ խասան
հիրար: Փիրմուրադը թրով տվեց դեւի լախտը մեշտեղից կղրեց:
Դեւ վերցուց տասը տոննանոց մե քար չպրտեց Փիրմուրադի վրեն,
ձին թռավ վիրե ու հիչավ, հըմա էտ ժամանակ Փիրմուրադը տվեց
դեւի մե գլոխը կղրեց: Դեւ գոռում ա, փնչում, ձեռն հընգած բանը
վերցում, չպրտում ա Փիրմուրադի վրեն, ուզում ա խասանի բռնա,
խեխտա, բայց ձինը փախծնում ա: Փիրմուրադը դեւի մե գլոխը մեկի
հետեից կղրում ա: Չորս գլոխը կղրեց, դեւ թուլցավ, բայց դիմադ-
րում ա: Օրը մթնում էր, դեւ էրկու գլխով հագիւլ ազատվավ, փա-
խավ: Էրկու գլխից մեկն էլ յարալու էր: Փիրմուրադը դեւի հետեից
չըգնաց, ձեն տվեց, որ ախպերները գան: Վախենում են հանգարց
դեւ ետ կդառնա, հիրանց վերչ կըտա:

Փիրմուրադը մեկ էլ ձեն տվեց.—Էկե՛ք, էկե՛ք, մի՛ վախեցեք,
դեւ ետ չի գա, էրկու գլխով ա փախե, հըմա մե վզի կեսն էլ կղրուկ
ա: Մե գլխով դեւ մեր դեմը չի գա, արխային էկեք:

Ախպերները վախվխելով մոտցան, փաթթվան Փիրմուրադին
պաշնեցին: Էստեղով մե գետ էր անցնում, լվացվան, ձիանքը ջրին:
Նստան:

Փիրմուրադն ասավ.—Ախպերնե՛ր, մենք 40 հոգի ենք՝ իրա-
վունք չունենք առանց պահակի քնելու: Չորս կոմից 100 գյազի վրա
պտի մե պահակ կայնի, գիշերվա կեսին կըփոխեն մեկէլ ախպերնե-
րը, թո մեր մեծ ախպերը դասավորա:

Հիշկացին մեծին: Մեծ ախպերը ենթարկվավ Փիրմուրադի ասածին: Նշանակեց ջուխտ-ջուխտ պահակներ, տեսավ, որ ախպերները վախենում են մինակ կայնելուց: Գիշերը բաժանեցին չորս մասի, ամեն անքամ 8 պահակ, չորս կողմերին ջուխտ-ջուխտ կայնեն: Նշանակին, թե ով ում զարթնցնա, հըրկա հիրա տեղը:

Մնացածները պարկան քնելու: Գիշերը հանգիստ հընցավ: Հառավոտը վեր կացան լվացվան, խաց կերան, որոշում են, թե ինչ անեն:

—Ետ էթանք, —ասավ մեծ ախպերը:—Որ դեր սաղ ա, մե վնաս կըգա, վնասից փախնենք:

—Փախնենք, փախնենք, —ասեցին մնացածները:

—Ձէ՛, ախպերներ՛ր, հարգավոր ա դևի արնի իղը բռնել, էթալ: Դեն էլ մեզի չի կանա վնաս տա, հիմի յարալու ա, արնաքամ ա հելե:

—Գնում ես՝ դու գնա, մենք չենք գա, —ասեցին բոլորը:

—Ախպերներ՛ր, ես ձեզի զոռով չեմ տանում, ե՛տ գացեք, ես էթում եմ դևի խետ կովելու:

Ասավ ու խեծավ ձինը, դևի իղով գնաց: Ախպերներն ամանչան, հընգան հետևը, գացին: Գացին, գացին, կեսօրին խասան դևի խորին:

Տեսան, որ դեր հիչեր ա խորը:

—Դեն հստեղ ա, տղե՛րք, հարգավոր ա ճուպան կապել մեջքներիս, հիչնել:

Բոլորը հրաժարվեցին հիչնելուց:

Փիրմուրադն ասավ.—Ես գիղեմ, որ դուք չեք հիչնի, հիչնեք էլ՝ օքուտ չըկա, դեր ձեզի կըսպանա: Բերե՛ք ձիանքի հորուկները հիւրար կապե՛ք, արե՛ք էրկուտակ, ընձի կախեք:

Ճուպանները, գնջիլները կապեցին, օլրեցին, ամրացրին ու կապեցին Փիրմուրադի մեջքին:

Մեծ ախպերն ասավ.—Փիրմուրա՛դ, ախպե՛ր ջան, ես քո մեծն եմ, ասում եմ, որ մի՛ հիչի խորը, քեզի մե վնաս պատահավ, մենք մեր խորը ի՞նչ պատասխան տանք: Բոլորիս սուրբյուն կանա, երգրից կըվռնդա, մե խոր բնավորութունը դու լավ ես հիմանում: Քո մորն ի՞նչ ջուղաբ տանք: Արունք կանա, քաղաքը հիրար կըխառնա, կասա զաստու սպաներ են, մեզի ամոթ ա: Արի քարը փեչից տթափա՛, ետ կայնի հիչնելու մտկից, թողենք հա դևերի երգրից եռանանք, մենք բզի էթանք հաջուջ-մաջուջների երգիրը, դևերի խետ ի՞նչ գործ ունենք:

—Մեր թշնամիները դևերն են, դևերը, —ասավ Փիրմուրադը,—մի՛ վախեցեք, ընձի բան չի հըլնի, դուք հստեղ ղոչա՛ղ կացեք, հան-

գարց մե բան պատահի, ընձի չըթողեք խորի մեջը, փախնեք: Եթե մե բան պատահի, չուտ ընձի քաշեք խանե՛ք, հըլնեմ, ես կըկոպեմ, դուք եոու կըմնաք:

Էս որ ասավ, ախն ու դողը հընգավ ախպերների սիրտը: Վախեցան էս դէն էլի ախպեր ունենա, գա, հիրանցը կոտորա: Վախից դողում են:

Փիրմուրադը ճոպանները մեշկին պնդցուց, ասավ.— Դե, ախպերնե՛ր, կախեք: Իչքան կասեմ՝ էփա, էրեցա, քաշե՛ք, դուք կախեք:

Կախեցին: Սպասում են, որ ասա՝ էփա, էրեցա, որ ետ քաշեն:

Փիրմուրադը ձեն չի անում, սուսուփուս հիչնում ա: 40 գյազ հիչավ խասավ տակը: Որ հիչավ տակը, հիշկաց էս յանը, էն յանը, տեսավ մե մեծ զալ: Էս զալի մեջ 40 դուռ ա բացվում ա, բոլոր դռներն էլ սաղափե: Հառաչին դուռը բացեց, տեսավ մե գեղեցիկ ախճիկ նստե լալում ա, աչկերից աղի արսունք ա թափում: Էնքան ա լացե, աչկերն ուռեք են:

Ախճիկը, որ տեսավ դուռը բացող հելավ, հիմացավ, թե դէն ա, գլոխը չըբանցըցուց, ասավ.— Սպանա՛, էլի, սպանա՛, հընչես մեզի բերե լցե էս փոսի մեջը, տանջում, հավելի լավ ա մեռնել, քանց էսենց արբել:

—Ո՛վ գեղեցկուհի, ես Փիրմուրադն եմ, էկեր եմ ձեզի ազատելու, ոնչ թե սպանելու: Հո՞ւր ա դէր:

—Վա՛յ, Փիրմուրա՛դ, քո գալուն իչքան ժամանակ ա սպասում ենք, քո ճամփեն ենք հիշկում: Հէրեկ դէն էկավ արնաթաթաղ, գլոխներից 10-ը կղրուկ, մեկն էլ կիսակղրել կախուկ, մնացեր ա մե գլոխը: Էկավ, բոլորիս էն տուրը տվեց, որ հալ չըթողեց, ասում ա. «Ձեր պատճառով ա Փիրմուրադն ընձի էս օրը քցե»: Փիրմուրա՛դ, ըստե մենք 40 քուր ենք, Հաջուջ-մաջուջ թաքավորի ախճիկներն ենք, ազատա՛ դէի ձեռից, մեր խերը քո լավության տակից դուս կըգա, պարտք չի մնա: Ես էս քուրերի ամենամեծն եմ, դէն հիմի պատի քվորս մոտ ա:

—Արի նշա՛նց տուր էտ դուռը, դու գնա մեկէլ քուրերիտ խաբա՛ր տու, թո ուրխնան: Ես հիմի դէի հաշիվը էնենց մաքրեմ, որ սաղ աշխարքն հիմանա:

Ախճիկը նշանց տվեց էտ դուռը: Փիրմուրադը թուրը ձեռին ներս մտավ, տեսավ մինակ պատի քուրն ա նստուկ, դէ չըկա: Կասկածն հընգավ սիրտը. «Ձըհըլնի՞ դէր փախեր ա»:

Ախճկան ասավ.— Որտե՞ղ ա դէր, հուրի՛-փերի:

Ախճիկը նոր գլոխը բանցըցուց, ասավ.— Վա՛յ, Փիրմուրա՛դ, քո էկած ճամփեքին մատաղ, աչկներս ջուր դարցավ սպասելուց,

էտ էրկթե դուռը կողրա՛, դէն էտտեղ ա, հերեկվանից փակե, մտե, նոռում ա, վա՛յ քո ձեռներին մատաղ:

Փիրմուրադը լո՞ւմ քթավ, բերեց դուռը քանդեց, ճխնախան արավ, տեսավ դէր պարկուկ ա, չի կանում ոտի վրէն կայնի:

Դէր, որ Փիրմուրադին տեսավ, ասավ.—Փիրմուրա՛դ, խխճա՛, յարալու եմ, յարալուին չեն սպանի, էտի քաջ մարթին վայել չի:

—Դէին վայե՞լ ա, որ 40 քուրը բերա, լցա մե փոսի մեչը, տա-րիներով տանջա, տփա, չարչարա: Քանի ձեր ցեղը չի վերջանա, ժողովրթին հանգստութուն չի հըլնի:

Թուրը քաչեց, դէի էն մե գլովն էլ կղրեց քցեց: Ախճիկներն հավաքվան, Փիրմուրադին ձեռից ձեռ են թոցնում, մեկն ասում ա՝ իմն ա, մեկն ասում ա ՝ իմն ա: Փիրմուրադը բոլորին էլ ասավ, որ հավաքվեն խորի մուտքի դալը, ընդե կըխոսան:

Գացին դալը, ասավ.—Ախճիկնե՛ր, մենք 40 ախպեր ենք, ես ամենից պատիկն եմ, ընձի կըխասնի պատի քուրը, մեծ քուրն էլ՝ մեծ ախպորս, կարքն էտենց ա: Հիմի ասեք, տենանք՝ հուր ա դէի հարստութունը: Նշանց տվին:

Ասավ.—Կրե՛ք, բերե՛ք ըստե:

Հինքն էլ էր կրում: Ինչքան թանկ բան կար, կապին, ճոպանով քաչին վիրե: Մացին ախճիկները:

Փիրմուրադը ձեն տվեց.—Ախպերնե՛ր, սկսում եմ մեծ քվորից, էսի մեծ ախպորս, դուք ըստե երթ պախեք, որ չըսխալվեք:

Բոլորին քաչեցին, մնաց պատիկը:

—էս էլ իմ բաժինը, ախպրտա՛նք, պատիկն ա:

Ախճիկը դանակը քցեց, ճոպանը կղրեց:

—Հառաչ դու բանցրցի՛, Փիրմուրա՛դ, ախպերներտ քեզի կը-թողեն խորի մեչը:

—Ձէ՛, իմ ախպերները լավ ախպեր են, էտենց բան չեն անի, բանցրցի՛:

Ճոպանը նորից կապեց մեչկը:

—Դե որ ըստենց ա, առ էս մատնիքը դի՛ մատտ, որ մնաս խորի մեչը, էս մատնիքը քեզի պետքը կըգա, կասես. «Մատնի՛ք, ես պտի էս խորի մեչը մնամ, փտե՞մ»:

Ախճկան էլ խանին, էլ բան չըմնաց: Եփ ախպերները տեսան, որ Փիրմուրադի բաժին հավելի լավ ա, հիրար ասին:

—Բերեք էսի տանենք մեր խորը, ասենք, որ Փիրմուրադին դէւ-րը կերան: Թե չէ, որ էսենց էթանք, բոլորն հիմանան, որ էսքան գործը Փիրմուրադն ա արե, մեզի ամոթ ա, մեր վրեն կըծողան: Փիրմուրադն էլ էս խորից դուս էկողը չի, թո փտի:

Ախպերներից Էրկուսը համաձայն չըհելան, հըմա մեծ ախպերը համոզեց, ձենները կողրին: Հարստութունը բարցին ձիերին, ախճիկներին նստցրին ձիանքին, հիրանք գյամներից բռնին, գացին:

Փիրմուրադի խարսնացուին էլ նստցրին Փիրմուրադի ձիան վրեն, կապեցին հիրանց ձիան կողից, տարան: Փիրմուրադի նշանածը լացավ, մխկտաց, աղմուկ-աղաղակ արավ, հըմա ուշադրութուն դարցնող չըհելավ: Քուրերն էլ հիրանց մարթի վախից ձեն չին անում:

Թո ըստոնք խոսալով, ծծղալով, Փիրմուրադի նշանածը լալով էթան, մենք խաբար տանք Փիրմուրադից:

Փիրմուրադը շատ կայնավ, սպասեց, որ ճուպանը կախեն, ձեն տվեց: Ջրկան: «Ուրեմն ընձի թողին խորի մեչ, գացին, վա՛յ, ախպերութո՛ւն, վա՛յ: Կէթան տունը, բոլորի մերերը կըփաթթվեն հիրանց տղերքին, խարսին, կուրխնան, մինակ իմ մերը կըմնա լալով, աչկը ճամփին»: Մատնիքը մոռացեր էր, նստավ լացավ:

Հանգարց աչկը հընգավ մատնիքին, ասավ.—Մատնի՛ք, ես պտի էս խորի մեչը մնամ, փտե՞մ:

Մատնիքն ասավ.—Փիրմուրա՛դ, քո հույսը դի՛ր քո թրի վրեն: Քո թուրը քառասուն գյազ ա, տար տնգա՛ անցքի մեչը, փաթթվի՛ թրին, բանցրցի՛, հուրիչ ճար չըկա:

Փիրմուրադը հելավ, թուրը կայնցուց խորի մեչը, փաթթվավ, բանցրցավ չանքի կեսը, ձեռները քրտնան, սլլալով հիչավ ցածր: Դինջցավ, մեկ էլ բանցրցավ, մնացեր էր 10 գյազ, էլի ուժը չըպատեց, սլլալով հիչավ: Պարկավ քնավ, հանգստացավ, ձեռներին փալասի կտոր փաթթեց, էլի փորցեց: Բանցրցավ, ձեռը քցեց խորի բերնին, դուս էկավ, տեսավ՝ գիչեր ա, աստղները ձնձխկտում են: Տեսավ՝ լուսու աստղը դուս ա էկե:

—Հա՛, լուսը բացվելու մոտ ա: Նստեմ, թո լուս բացվի, տենամ, թե որ յանն էթամ:

Թուրը պաչեց, դրեց գլխի տակը պարկավ: Տեսավ՝ լուսուղեմ ա, պաղ քամի ա գալում, մտածեց. «Պարկեմ, կըմրսեմ, հընեմ ման գամ»: Հելավ խորի մոտ ման էր գալում, մեկ էլ ձիան խրխնջոց լաց. «Էսի իմ ձիան ձենն ա»:

Ոնց որ ասի, էս ձիան գյամը կապեր ին հիրանց ձիան կողից: Որ գացին, մե տեղ նստան հանգստանալու, էս ձինը քաչեց գյամը կողեց ու ետ փախավ: Մե քանիսը խեձան ձիանքը հընգան հետևից: Է, կըխասնե՞ն: Ըսկի թողին էլ չին խասնում, ետ դարցան գացին, ձինն էկավ թբա Փիրմուրադը: Փիրմուրադը տեսավ հեսա մե ձի գյուլնի նման գալում ա: Լուսը լավ չէր բացվե, հըմա երիչից հիմացավ, որ հիրա ձինն ա: Էկավ, էկավ հիրա ձինը: Փաթթվավ

վիզը, աչկերը պաչեց, խեձավ: Կես սհաթ չէր հընցե, խասավ ախպրտանքին:

— Բարև, ախպրտա՛նք ջան, հո դեի-մեի հոաստ չե՞ք էկե, չե՞ք վախեցե:

Ախպերներն ամոթու ձեն չըխանին:

— Դե բան չըկա, ախպերներ՛ր ջան, դարդ մի՛ արեք, էտենց էլ ա հըլնում, մոռացե՛ք, թո էթա:

Փիրմուրադի նշանածը հելավ փաթթվավ Փիրմուրադին, ուրախութունից ոնց ա լալում:

Փիրմուրադն ասավ.— Ախպերներ՛ր, հիմի ես իմ կնիկը կառնեմ կէթամ տուն: Ես մեր խորը ձեր արածի մասին բան չեմ ասի, դուք էլ էտ մասին չըխոսաք, թո մեր խոր ուրախութունը չըդառնա տխրութուն: Զորք կը հղրկեմ, որ գան ձեր հառաչը, ձեզի թաքավորին վայել դիմավորեն:

Կնգան վերցուց գիրկը, ձիան կարկտուկ գյամը բաց թողեց: Մեկ էլ տեսան՝ Փիրմուրադ չըկա:

Չնայած Փիրմուրադը խոսկ էր տվե՝ խորը չըպատմա ախպերների արածը, հըմա ախպերների սրտից վախը դուս չէր գալում: Փիրմուրադը կէթա, գլոխ կըգոժա, խորը-մորը կըպատմա, էլ հիրանք ի՞նչ հերեսով էթան տուն: Մտածում են ու էթում:

Փիրմուրադը տուն խասավ, խորն ասավ, որ ախպերները բոլորն էլ նշանվել, գալում են, հարգավոր ա էթալ հառեչները, խարսնեղին պատվով բերել: Թաքավորը խեձավ հիրա ձինը, վազիր-վաքլի, գորքի հառեչն հընգած, գնաց տղերքին ու խառաներին դիմավորելու: Ի՞նչ ուրախութուն: Տղերքը տեսան, որ խերը ջղայնացած չի, ուրեմն Փիրմուրադը բան չի ասե՝ աբրե՛ս, տղա՛, մենք միշտ քո մասին վատ բան ենք մտածե, դու վատի դեմ լավութուն ես արե:

Ուսան տուն: Փիրմուրադը, մերը, խարսնացուն, ըտոնց մերերը, էկան, ամեն մեկը փաթթվավ հիրա խարսին ու տղին, չախ են տալում, խաղում են, առանց խառնիսն սկսելու, հիրանք սկսեցին: Ուաղով, պարով լցվան պալատը, ամենքը գնաց հիրա հօթաղը:

Թաքավորը հրաման տվեց խառնիսի պաղրաստութուն տենան: Վազիրին հղրկեց Հաջուջ-մաջուջների թաքավորին աչկի լուս տան ու կանչեն խառնիսի: Էսքանը քաչեց մե ամիս: Հաջուջ-մաջուջների թաքավորը, հիրա կնիկը, վազիրները 3000 զորքով էկան:

40 օր, 40 գիշեր խառնիս արին, բարեկամութուն հաստատին, որ էլ կռիվ չեն անի: Էս բոլորը որ վերչացավ, Հաջուջ-մաջուջների թաքավորը ուզեց չնորակալութուն հայդնա, էթա, հըմա Գյուլխան թաքավորն ասավ, որ էլի գործ կա, սպասեն:

Մյուս օրը հրաման տվեց մեջլիս հրավիրեն, քաղաքի ժողովրթին կանչեն, գործ կա: Ոնչ մեկը չէր հիմանում, թե ինչ խաբար ա: Էկան լցվան հրապարակը: Ասեղ քցելու տեղ չըկար:

Թաքավորն ասավ.— Ժողովո՛ւրթ, վազի՛ր-վաքի՛ւ, իշխաննե՛ր, լա՛վ լսացեք: Դուք հիմանում եք, որ իմ սիրած թիվը քառասունն ա: Ես որոշեր եմ 40 օր մնալ թաքավոր, 40 օրից ետո էլ թաքավոր չեմ հըլնի, մեզի հարգավոր ա մե թաքավոր: Ես քառասուն տղա ունեմ, խոսկը տանք մեծ տղիս, տենանք՝ ի՞նչ ա ասում:

Մեծ տղեն չփոթվեց, մտածեց, հազաց, նայեց չորս կողմը, տեսավ՝ Փիրմուրադը ուրախ հիրանն ա հիշկում:

— Ժողովո՛ւրթ, — ասավ թաքավորի տղեն, — քանի որ իմ թաքավոր խերը իրավունք ա տվե, ես կըխոսամ, հըմա բոլորիտ խնթրում եմ իմ հառաչարկութունը չըմերժեք: Օրենքով թաքավորութունը ընձի ա խասնում, հըմա ես հրաժարվում եմ էտ պատվից: Մեր 40-ի մեչի ամենաքաջը, ամենախելոքը, ամենաբարին, մեծ սրտի տերը Փիրմուրադն ա, ես իմ թաքավորութունը Փիրմուրադին եմ տալում, — ետո դառնալով ախպերների յանն ասավ, — դո՞ւք ինչ կասեք, ախպերնե՛ր, համաձա՞յն եք Փիրմուրադին ենթարկվելու:

Ախպերները ծափ տվին, ծափ տվեց ժողովուրթը:

— Կեցցե՛ք Փիրմուրադ թաքավորը:

Փիրմուրադը բողբոջեց, չըհամաձայնվեց, հըմա ժողովուրթն հընդրեց, ինչ կանա: Հիրա խերն ու աները Էկան նոր թաքավորին չնախավորեցին, հերեսները պաչին, նորից սկսվեց քեֆ-ուրախութունը, որը քաչեց օխտը օր:

Աները գնաց, տարան չանքի հիրանց երգրի սահմանը ճամփու դրին: 40 փեսեն էլ, 40 աղջիկն էլ Էկան սահմանի վրեն, «մնաք բարով», «էթաք բարով» ասին, ետ դարցան, բոլորը ուրխցան, բացի մեծ տղի մորից, որ տղեն թաքավորութունը տվել էր Փիրմուրադին:

Ընդոնք խասան հիրանց մուրազին, դուք էլ խասանեք ձեր մուրազին: Զարը՝ չարին, բարին՝ մեզի: